

ՀԱՋՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Հորանջ, կիսաձայն և ձայնորդ)

Պրոֆ. Ֆրեդերիկ Ֆեթի (Ֆրանսիա)

Հայերեն լեզվին մեջ ընդհանրապես հորանջը հազվադեպ է: Հորանջ են խուսափելու համար երեք միջոց կա. ա. մեկ ձայնավորին անկումը, օր. նεατρον/ ρωτορ (?). գրեթե անգործածական, բ. մեկ ձայնավորին բաղաձայնացումը, օր. տեղի, գործիական տեղեալ (=teŷyaw), գ. ներմուծումը երկու ձայնավորներուն միջև հավելված կիսաձայն բաղաձայնի մը: Այս վերջին պարագային երևան կու գա երկրորդ ձգտում մը, որ է՝ e և i առաջնալեզվային ձայնավորներուն առջև գործածել միջնալեզվային y կիսաձայնը, իսկ o և u ետնալեզվային ձայնավորներուն առջև՝ ետնալեզվային w կիսաձայնը. այս պարագային՝ ո-են ետք՝ լ-ը վ-ով կփոխարինվի: Ա ձայնավորը, բնական վիճակին մեջ, միջնալեզվային է, բայց շրջապատող հնչյուններու ազդեցության տակ կրնա ետնալեզվային դառնալ: Կիսաձայնի ընտրության այս ձգտումը հայտնի կըլլա փոխառությանց մեջ, օր. Միֆայէլ, Եփրայիմ մեկ կողմը, Սաւուդ, Սաբաւովթ մյուս կողմը, իսկ a-ի համար՝ Մովաբ և Սենայար:

Բայց այս ձգտումը դեռ ավելի առաջ կերթա... մինչև փոխառյալ բառերուն արմատական կիսաձայները փոխել հայերենի ձայնաբանության կանոններուն հարմարցնելու համար: Այսպես november (=nowember) լատիներեն բառը կդառնա նոյեմբեր յ-ով (փոխանակ լ-ի կամ ու-ի?): Ուրիշ փոխառություն մը՝ ποιετης (պուէտ) նոր հարց մը կը հարուցանե. այս բառին մեջ հունարենը y ունի e-են առաջ և այս՝ պետք էր գոհացներ հայերեն լեզվին ձայնաբանական պահանջը. այսուհանդերձ այս yw-ի կփոխվի հայացած պուէտ (=powet) բառին մեջ: Այս զարտուղությունը կարծեմ կրնա բացատրվիլ հետևյալ ձևով. մինչդեռ Միֆայէլ Ռափայէլի նման հատուկ անուններ համեմատաբար ուշ ժամանակին փոխ առնվեցան և այն ժամանակ արդեն ey նախկին երկբարբառը պարզ, բայց տակավին երկար e ձայնավորի վերածված էր (ուստի Միֆայէլ կրնար հնչվիլ Mik'ayel [և ոչ Mik'ayeyl]), պուէտ բառը ավելի վաղ ժամանակին փոխ առնված ըլլալու է, երբ է տակավին ey երկբարբառեն պահած էր շատ նոսրացած բայց ոչ տակավին բոլորովին անհետացած y բաղաձայնական տարրը: Եվ կթվի (երրորդ ձգտում), թե հայերեն լեզուն կխուսափի yey և wow միջին բարձրացման ղուգածայր (? , հավասարածայր ? symétrique) եռաբարբառներեն: Այս երրորդ ձգտումը ի հայտ կուգա բառին սկիզբը, ուր մեկ կողմեն է չի կրնար ye հնչվիլ (այլապես, անհնարին *yey-ի մը հաջորդը կըլլար) և մյուս կողմեն՝ n պարզ ձայնավոր կդառնա, եթե ետևը դրվի վ մը (որ ո-են ետքը լ կփոխարինե). ուստի ովկեանոս կը հնչվի ovkianos և ո՛չ vovkianos, ով կհնչվի ov և ո՛չ vov և այլն: Ասոր հետևանքով ποιετης չէր կրնար *պուէտ = *poyeyt ձևով ընդունվիլ և դարձած է պուէտ = poweyt. Այստեղ ալ փոխառյալ բառին կիսա-

ձայնը փոխված է, և այս փոփոխությունը չի կրնար առանց պատճառի կատարված ըլլալ:

Բայց կերևի, թե կիսաձայնի փոխելու ձգտումը ոչ միայն հորանջեն խուսափելու համար ներմուծված կիսաձայններուն վրա կիշխե, այլ նաև հորանջեն խուսափելու համար բաղաձայնացած ձայնավորներուն: Այլ, սեռական ձևերի ձևերուն դիմաց պետք էր որ գտնեինք իբրև համապատասխան ձևեր՝ աեղը, սեռական *teleyoy (այս վերջինը անգրեի մեսրոպյան այբուբենով): Սեռականի աեղու ձևին մեջ, y կիսաձայնը ու-ի առջև փոփոխված է w-ի: Ըսել է թե այս ձգտումը հոլովման ալ կրնա տիրել: Այս եղելությունը դարմանալի չէ, քանի որ ձայնաբանական կանոնները կանգիտանան՝ գործելու իրենց առիթ տվող պարագաներուն բնությունը (հոլովում, խոնարհում, բաղադրություն և այլն): Հոլովման մեջ այս ձգտումը գազաթնակետին հասած է միավանկ Հալ բառին սեռականի զարտուղի ձևերով, զարտուղության առաջին փուլը ըլլալով Արուծի VII գարուն արձանագրության հայտնի սեռականը (որուն մեջ Վ-ը կավելնա յ-ին կապը հաստատելու համար հաջորդ ու-ին հետ) և վերջնականը՝ գավառաբարբառային հաուու, հաուուց ձևերով (որոնց մեջ Վ-ը բոլորովին անհետացուցած է արմատական յ-ն):

Չորրորդ ձգտում՝ հնդեվրոպական լեզվեն սերումին ընթացքին կամօտար լեզվե փոխառության պարագային, եթե սկզբնատիպ բառին մեջ l, r կամ n բաղաձայններեն՝ կամ ետք կամ առաջ գտնված ձայնավորը իյնա, բառին հայանալուն ժամանակ՝ հիշյալ բաղաձայնները ձայնորդի հանգամանք կստանան, եթե վերջնահնչյուն դառնան բաղաձայնե վերջ: Նկատելով լատ. Caesar հայ. կայս¹, կրնանք մղվիլ ենթադրելու, որ ձայնեղ տարրը, որ կգտնվի ինկած ձայնավորին տեղը, ասոր նոսրացած մեկ մնացորդ է, բայց եթե ուղադրությամբ դիտենք հուն. θάλασσα հայ. թաւ², հուն. ἄλυσον հայ. ալս² զույգերը, կհասկնանք, որ այս ձայնեղ տարրը, որ այլևս ինկած ձայնավորին տեղը չի բռնել, բաղաձայնին միացած է զայն ձայնորդի փոխելով: Նույնպիսի ընթացք մը երևան կուգա հուն. σελήνη հայ. սիկ², լատ. arcua հայ. արկ² զույգերուն մեջ: Առժամայես կվերապահեմ ռ հնչյունին պարագան, որ նույնքան հստակ չէ:

Շատոնց լեզվագետները նշմարեցին, որ հայ. v կրնա սերիլ հնդեվրոպական զանազան բաղաձայններե. օր. *p-³ *svopno > հայ. բոււն, *septn > հայ. եւթն, *t-⁴ *patr(os) հայ. հաւր, հուն. πατήρ-ի դիմաց հայ. արաւր, *m-⁵ *nomn հայ. աւոււն և այլն: Բնական է, որ հնդեվրոպական բաղաձայնները փոխարինելու ժամանակին Վ-ը պետք էր բաղաձայն ըլլալ, w բաղաձայն: Այն ժամանակ, բաղաձայնե հետո, անպայման l, r, n բաղաձայնները պետք էր որ ձայնորդ դառնային. *svopno > *k'ow⁶n, *aratron > *araw⁷r, *nomn > anow⁸n ևն: Բայց այն ժամանակ անհավասարակշռության խնդիր մը բարդություններ կհարուցաներ, որովհետեւ մեկ կողմեն՝ Վ-ը կրնա գործել կամ իբրև բաղաձայն (w), կամ իբրև ձայնավոր (երկբարբառի երկ-

1 Ծ նշանը կնշանակէ կամ նոսր ձայնավոր հենարան մը և կամ ձայնորդի մը ձայնեղ տարրը:

2 Անգլերէն լեզվին մեջ նույն բաղաձայնները, երբ որ վերջնահնչյուն ըլլան, նույն հատկությունները կրնան ունենալ. օր. example արտասանված exampl ֆրանս. exemple բառէն, temple արտասանված temp²l ֆրանս. temple-էն, theater ֆրանս. théâtre-էն և այլն: Այս դիրքին մեջ l կդառնա ետնաբային (ինչպէս որ էր հայերէն դ-ը) և r՝ լեզվակային r-ի վիճակէն՝ կդառնա տեսակ մը կոկորդային խեղդված աղմուկ:

րորդ տարր) և մյուս կողմեն՝ 1 (ղ), ր (ր) և ո (ն) ունին այն հատկությունը, որ կրնան կամ պարզ բաղաձայնի կամ ձայնավորի (իբրև ձայնորդ) դեր կատարել: Ո՞րը ձայնավոր պիտի ըլլա և ո՞րը բաղաձայն՝ այս միության մեջ: Առաջին ժամանակ, առաջին հնչյունը բաղաձայն է և երկրորդը՝ ձայնավոր, ապա շրջում մը տեղի կունենա. բաղաձայնը ձայնավոր կդառնա և ձայնավորը կբաղաձայնանա: Այսպես է օրինակի համար որ հուն. $\gamma\mu\alpha\rho$ ձևին դիմաց ունինք նախ $*aw^o$ և ապա au աւ, իսկ $*svopno$ -ի դիմաց՝ նախ $*k^ow^o$, ապա $*k^ou$ և, վերջապես, երկբարբառը ձայնավորի վերածվելով: $*k^un$, որուն և ձայնավորը, իր ծագումով հանդերձ՝ սղման կանոնին կենթարկվի, սեռ. fno (հինգերորդ ձգտում): Այս հինգերորդ ձգտումին հետևանքով, այսինքն այս խումբին անկայունության պատճառով, մինչդեռ միավանկ (կամ, ըստ որոշ հայ քերականներու՝ մեկուկես վանկի) աւ բառը ձայնորդահիմք հոլովման ենթարկված է, սեռ. au (որ ուղղականի aw^o ձևի մը կհամապատասխանե), au (արաւ հնչված) բառին սեռականը կըլլա au (ներքաձայնակավոր հոլովման սիստեմին համեմատ, և ոչ au): Կերևի թե օ ձայնավորեն վերջ, թերևս որովհետև այս ձայնավորը ավելի զորավոր ձգտում մը ունի և-ը յուրացնելու և (ու) ձայնավորը կազմելու համար, և ր խումբը դեռ ավելի անկայուն է: Ջուր, հուր և հանուր բառերը, որոնք ամբողջությամբ ո հոլովումին կհետևին, պահած են հնաձև ջուր, հուր և հանուր եղակի գործիականները, ջուր և հանուր պահած ըլլալով նաև ջուր և հանուր հոգնակի սեռականները և ջուրք ու հանուրք հոգնակի գործիականները: Այս յուրահատկությունները ինծի ենթադրել տված են, որ հեռավոր անցյալի մը մեջ եղած է սիստեմ մը $*ju^o$ $*ow^o$ սեռ. $*jou$ և ապա երկու ձևերն ալ համընթաց վերածվելով $*jou$ -ի ($*jo$ -ուր) և վերջապես $*ju$ -ի, երկու հոլովները մեկը մյուսեն զանազանելու հնարավորություն չէր մնացած և այն ժամանակ սեռականը արտահայտելու համար հասարակաց ձևին վերջավորություն մը ավելցնելու դարմանին դիմվեցավ: Ասոր հետևանքով, հետզհետե, ամբողջական նոր հոլովում մը ստեղծվեցավ այս նոր սեռականին ձևին համեմատ: Բայց քանի որ միայն սեռական-տրական ձևին համար է, որ ձայնորդահիմք հոլովումները վերջավորութենե զուրկ էին և մյուս թեք հոլովները (բացի հայցականեն) հատուկ վերջավորություն ունեին, այս վերջինները գոհացուցիչ հստակություն ընծայելով՝ կրցան նույնությամբ պահպանվիլ, մրցակցելով նոր ձևերուն հետ:

Ինչպես $*պաշտամ^o$ դարձած է $պաշտա^o$ ($paštaw^o$), կամ $*անում^o$ ՝ $անու^o$ ($anow^o$). նույնպես մրջիմ^o դարձած է մրջիւ^o: Բարեբախտաբար, հին և նոր ձևերը՝ մեկ կողմեն մրջիմն, սեռ. մրջման, մյուս կողմեն մրջիւն, սեռ. մրջեան, մրցակցաբար գտնվելով գրաբար լեզվին մեջ, վկայություն մը կունենանք, որու շնորհիվ այս հնչյունափոխության իրականությունը հաստատված է: Բնականաբար, որպեսզի և-ը մ-ը փոխարինե, պետք է որ բաղաձայն ըլլա, այն ժամանակ ն-ն պետք է որ ձայնորդ դառնա. արդ՝ ձայնորդին ձայնեղ տարրը միջնալեզվային է, սեռականին վերջավորության ա-ն համեմատաբար ավելի առաջնային է³. ուստի այն ա-ն, որ ձայնորդին առջև

³ ա ձայնավորը, որուն բացվածության աստիճանը կախում ունի շրջապատող հնչյուններից, բաց է անուան սեռականին մեջ նախորդ ո-ի հեռավոր աղբյուրության տակ (նախկին

կգտնվի, պիտի փոխարինվի *y-n* վ ա-ին առջև. *mrjim^on/mrjman*, *mrjiw^on/mrjyan* (թեև հակառակ ուղղությամբ, սակայն միևնույն ձգտումն է ինչպես *որդի/որդոյ* դույզին մեջ): Անկե կրնանք եղրակացնել, որ այս հոլովման հիմքերն են՝ ոչ թե *-yun/-yan* այլ *-(i)w^on/-yan* (i-ի բնականոն սղմամբ): Նորեն նույն ձգտումն է, որ բացատրությունը պիտի տա աղբիւր և ալիւր բառերուն սեռականի ձևերուն. *ałbiw^or* (ձայնորդով՝ ինչպես որ վերը տեսանք) այս ձգտումին համեմատ պետք է տա *ałbyer* սեռականի ձև (ի ձայնավորին սղումով, քանի որ ուղղականի ձևին մեջ այս ձայնավորը շեշտակիր վանկին մեջն էր), իսկ *ałbew^or* պետք է տար *ałbeyer* ձևը, բայց ով կրնա ըսել թե ե-ը չի կրնար սղման ենթակա ըլլալ և խումբին առջև ինչպես է *ղ-ի* առջև, ասեղն/ասղան, քիթեղն/քիթղան դույզներուն մեջ (բացառությամբ աղեղն/աղեղան դույզին, որ կանոնը ավելի կասկածելի կդարձնե), կամ ո-ի առջև ծիծեռն/ծիծուան դույզին մեջ (հակառակ՝ եղեռն/եղեռան պարագային,—սխեռն բառը վարանելով սխռան և սխեռան սեռականներուն միջև): Այն ժամանակ թե՛ *ałbiw^or*, թե՛ *ałbew^or* կրնային նույնպես *ałbyer* ձևով սեռական ունենալ և **ałbyer* ձևեն մինչև մեր ճանչցած աղբեր ձևը ճամփան երկայն չէ (նվազ քան ժամանակին ենթադրված **ałbewater* ձևեն): (Ավելացնենք, որ մեկ կողմեն *ye*-ն կրնար զգացվիլ իբրև բարբառային երկբարբառացում *ն-ի* և մյուս կողմեն մեարդայան ալբուբենը դուրին միջոց մը չէր տար այս դիրքին մեջ գտնված *ye* երկբարբառը գրելու): Բայց պրսկ. *bewar/biwar* ձևերեն փոխառնված բիւր հայ. բառին համար կճանչնանք միայն վերջամասնիկավոր հոլովում մը: Բնականոն իրողություն մըն է. *biw^or* պիտի տար սեռականի մը բոլորովին անհարմար միավանկ **byer* ձև մը: Նույնպես տակավին կբացատրվի գիւղ բառին սեռականը. *biw^oi* ուղղականին պետք է համապատասխանե *gyeł* (նույնպես ի ձայնավորին սղումով) սեռական մը, բայց թե՛ այս սեռականը միավանկ է, թե՛ ուղղականին ձևը անորոշ է (գիւղ, գեւղ, գեղ, գեաւղ): Հստակության սիրոյն համար (պիտի ըսեի «պաշտամունքին» համար, որովհետև լեզվին ամբողջ պատմության ընթացքին հայերը ցույց տված են իսկական պաշտամունք մը արտահայտչական ճշգրտության հանդեպ) սեռականին այս խրթին ձևին ավելցվեցավ —ջ վերջավորությունը և եղավ՝ *գեղջ* (համար. ջրոյ և այլն սեռականներուն պարագային): Մյուս հոլովներուն համար գործածվեցան ի հոլովումին վերջավորությունները:

* * *

Ձայնաբանական այս դանաղան ձգտումները կբացատրեն որոշ հոլովումներու մեջ նկատված զարտուղություններ և անոնց գոյության ճանաչումը հնարավորություն կուտա նախահայերենին հոլովման կառուցվածքային կապակցությունը վերագտնելու:

**apowan*). *գոց* է մըշման, մըշեան սեռականներուն մեջ ի-ին աղդեցության տակ (մնացորդայն ժամանակեն, երբ **մըջիման*, **մըջի-եան*== *mrjyan* ձևերուն ի-ն տակավին բոլորովին անհետացած չէր):

⁴ Նույնպիսի հարց մը ծաղեցավ սկոտեղ փոխառյալ բառին համար, երբ որ, չես գիտե՞ր ինչու, ձայնորդահիմբ հոլովումին կապակցավ (սկոտեղ, սեռ. սկաեղ):

ФОНЕТИЧЕСКИЕ ЗАМЕЧАНИЯ

(Зияние, полугласные и сонанты)

Проф. ФРЕДЕРИК ФЕЙДИ (Франция)

(Резюме)

В статье рассматриваются способы преодоления зияния, встречавшегося в древнейших заимствованиях армянского языка, а также возникавшего при склонении некоторых основ в протоармянском. Подчеркивается роль полугласных у и w, выступающих в интервокальной позиции во избежание зияния, определяются условия их появления: у—после гласных переднего, w—после гласных заднего ряда. Отмечается, что слоговые сонанты ɣ, l, отчасти n, возникают вследствие выпадения предшествующего гласного.

Тенденциями преодоления зияния объясняются некоторые отклонения в системе склонения древнеармянского языка, при этом устанавливаются промежуточные звенья фонетических переходов.